ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1185/02/24 ք. Երևան
27 Փետրվարի 2024թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով ՍՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ ՍՊ ընկերության ընդդեմ պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի՝ Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ՍՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 19.02.2024 թվականին էլեկտրոնային եղենակով հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքապետարանի՝ Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 19.02.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Օհանյանին:

Դատավոր Ա. Օհանյանը 19.02.2024 թվականին կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 20.02.2024 թվականին կրկին ներկայացվել է հայցադիմումը:

Կրկին ներկայացված հայցադիմումը 22.02.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին:

**I.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալու պահից, բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ հայցադիմումն որոշակի թերությունների հիմքով վերադարձվելու դեպքում հայցվորը չի զրկվում այդ թերությունները վերացնելուց հետո հայցադիմումը դատարան կրկին ներկայացնելու հնարավորությունից: Ավելին, դատարանի կողմից թվարկված թերությունների վերացման և սահմանված ժամկետում հայցադիմումը կրկին դատարան ներկայացնելու փաստի ուժով հայցադիմումը դատարանի կողմից համարվում է դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Անդրադառնալով սույն գործով հայցադիմումի վերադարձման հիմք հանդիսացող թերությունների՝ հայցվորի (ներկայացուցչի) կողմից վերացված լինելու և սահմանված ժամկետում Դատարան ներկայացված լինելու հարցերին՝ Դատարանն արձանագրում է հետևյալը.

**Ա.** Դատարանի կողմից սույն գործով հայցադիմումի վերադարձման որոշումը կայացվել է 19.02.2024 թվականին՝ արձանագրված թերությունները վերացնելու և այն Դատարան կրկին ներկայացնելու համար սահմանելով եռօրյա ժամկետ: Համաձայն էլեկտրոնային արդարադատության իրականացման ավտոմատացված ծրագրում՝ էլեկտրոնային համակարգում (այսուհետ նաև՝ Համակարգ) գտնվող և Համակարգի միջոցով սույն գործի վերաբերյալ հասանելի նյութերի և տեղեկությունների՝ հայցվոր կողմն այդ որոշումը Համակարգի միջոցով դիտել է (կարդացել է) 20.02.2024 թվականին և հայցադիմումը ու դրան կից փաստաթղթերը նույն օրը կրկին ներկայացրել է Դատարան, ինչպիսի պայմաններում Դատարանը, ղեկավարվելով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ և 119.5-րդ հոդվածներով, կարծում է, որ հայցադիմումը կրկին ներկայացնելը կատարվել է սահմանված ժամկետում:

**Բ.** Անդրադառնալով հայցվոր կողմի թույլ տրված թերությունները վերացված լինելու և

հայցադիմումը վարույթ ընդունելու հարցերին՝ Դատարանը նախ արձանագրում է, որ հայցվոր կողմը լիազորագրի մասով արձանագրված թերությունը վերացրել է:
Ինչ վերաբերում է պետական տուրքի մասով արձանագրված թերության վերացված լինելուն՝ Դատարանը հարկ է համարում նշել, որ կրկին ներկայացված հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես՝ թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագրի հավելված թիվ 1-ի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանաացույցի-ի պատճենի, թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագրի հավելված N 3-ի Վճարման ժամանակացույց-ի պատճենի և թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի գնումների պլանի վերոնշյալ փաստաթղթերը սկզբնապես ներկայացված հայցադիմումին կից չեն ներկայացվել, որ թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն:
Այսպես, Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:
Տվյալ դեպքում, հայցադիմումին կից հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է 100.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, հետևապես հաշվի առնելով այն, որ կրկին ներկայացված հայցադիմումին կից առկա վերոնշյալ փաստաթղթերից հետևում է, որ սույն գործով վեճը վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացին, Դատարանը կարծում է, որ հայցվորի ներկայացուցչի կողմից վճարվել է անհրաժեշտ չափի պետական տուրքի գումար:
Արդյունքում՝ Դատարանը արձանագրում է, որ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չէ նույն օրենսգրքի 126-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, ինչպիսի պայմաններում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ՝ համարելով այն Դատարան ներկայացված հայցադիմումը սկզբնապես ներկայացնելու օրը:
**II.** Հաջորդիվ, Դատարանը, անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված հայցադիմումում շարադրված պետական տուրքը հետաձգելու վերաբերյալ միջնորդությանը, հարկ է համարում նշել, որ սույն որոշման I կետի Բ ենթակետում Դատարանն արդեն իսկ անդրադարձել է սույն քաղաքացիական գործով վճարման ենթակա պետական տուրքի հարցին և արձանագրել, որ հայցվորի ներկայացուցչի կողմից վճարվել է անհրաժեշտ չափի պետական տուրքի գումար, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ պետական տուրքը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը առարկայազուրկ է ու ենթակա է մերժման:
**III.** Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանից պահանջել ՀՀԱՄՄՀ-ԲՄԱԾՁԲ-23/108 ծածկագրով գնման

գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
**IV.** Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 124-րդ, 199-200-րդ հոդվածներով

## ՈՐՈՇԵՑ

**1.** ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի՝ Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/108» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ՄՈԴԵՌՆ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ՝ այն համարելով Դատարան ներկայացված սկզբնապես ներկայացնելու օրը:
**2.** ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանից պահանջել ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/108 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
**3.** եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի ապրիլի 10-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
**4.** որոշման ապացույցներ պահանջելու մասին պահանջը պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,
**5.** որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանող կողմին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
**6.** Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման

**Դատավոր՝ Ազատ Դունամալյան**

Digitally signed by DUNAMALYAN AZAT
1809870089
Date: 2024.02.27 17:43:21 AMT

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*